ՀՏԴ 94(5)
Պատմություն

Ալեքսանդր ԽԱՉԱՏՐՅԱՆ
ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի ասպիրանտ
e-mail: khachatryan.aleksandr@gmail.com

ՉԻՆԱՍՏԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿՈՒՄՆ ՈՒ ՍԻՆ-ԾԻԱՆԳ ՈՒՅՂՈՒՐԱԿԱՆ ԻՆՔՆԱՎԱՐ ՄԱՐԶԻ ՁԵԱՎՈՐՈՒՄԸ

Հոդվածը XX դարի առաջին կեսի Չինաստանի ներքին և արտաքին քաղաքականության վերլուծությունն է: Նրանում անդրադարձ է կատարվում Արևելյան Թուրքեստանի հանրապետության և ԽՍՀՄ միջև հարաբերություններին, ույղուրական խնդրին, Չինաստանի ներքին քաղաքացիական պատերազմին և Սինձիան մարզի վերջին պատմական էտապին: Այն բազմակողմանիորեն դիտարկում է նաև տարածաշրջանում գլխավոր ակտորների հետաքրքրությունները և դրանց անմիջական կապը Չինաստանի Ժողովրդական Հանրապետության հռչակման հետ: ՉԺՀ հռչակումից հետո Սինձիան մարզը մտնում է Չինաստանի կազմի մեջ, իսկ 1955 թվականին ստեղծվում Սին-Ծիանգ ույղուրական ինքնավար մարզը:

Բանալի բառեր՝ *Ույղուրներ, Չինաստան, Ույղուրական հարց, Արևելյան Թուրքեստանի Հանրապետություն, Չինաստանում քաղաքացիական պատերազմ, Սին-Ծիանգ ինքնավար մարզի պատմություն*

А. Хачатрян

ПРОВОЗГЛАШЕНИЕ КИТАЙСКОЙ НАРОДНОЙ РЕСПУБЛИКИ И ОБРАЗОВАНИЕ СИНЬЦЗЯН-УЙГУРСКОГО АВТОНОМНОГО РАЙОНА

Данная статья содержит анализ внутренней и внешней политики Китая в первой половине 20-го века. В статье рассматриваются отношения между Восточно-Туркестанской Республикой и СССР, уйгурский вопрос, гражданская война в Китае и последний исторический этап провинции Синьцзян. В ней также рассматриваются интересы основных региональных держав и их связь с появлением новой Китайской Народной Республики. После провозглашения Китайской Республики провинция Синьцзян вошла в состав Китая, а в 1955 году был формирован Синьцзян-Уйгурский автономный район.

Ключевые слова: *Уйгуры, Китай, Уйгурский вопрос, Восточно-*

Туркестанская Республика, Гражданская война в Китае, История Синьцзян-Уйгурского автономного района

A. Khachatryan

PROCLAMATION OF THE PEOPLE'S REPUBLIC OF CHINA AND THE FORMATION OF THE XINJIANG UYGUR AUTONOMOUS REGION

This article contains an analysis of China's domestic and foreign policy in the first half of the 20th century. The article considers the relations between the East Turkestan Republic and the USSR, the Uyghur issue, China's civil war and the latest historical stage of the Xinjiang province. It also includes the analysis of international actors' interests in the region and their direct link with the proclamation of the People's Republic of China. After the proclamation of the PRC, the province of Xinjiang became part of China, and in 1955 the Autonomous province of Xinjiang was established.

Keywords: *Uyghurs, China, Uyghur issue, East Turkestan Republic, Civil war in China, History of the Xinjiang Uygur Autonomous Region*

Պատմական հայացք գցելով ույղուրական հարցին՝ պարզ է դառնում, որ չին-ույղուրական հարաբերությունները մշտապես լի են եղել դոմինանտության համար պայքարի դրսևորումներով, իր մեջ ներառելով՝ թե՛ էթնիկ, և թե՛ կրոնական բաղադրիչներ: Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար մարզը ձևավորվում է 20-րդ դարի կեսին, երբ Չինաստանում հաստատվում են կոմունիստական կարգերը: Տվյալ քաղաքական փոփոխությունները պայմանավորված էին ներքին քաղաքացիական պատերազմով և արտաքին միջազգային ուժերի գործոնով:

Դիտարկենք Չինաստանի ներսում գործող քաղաքական գործընթացները, որոնք մեծ ազդեցություն ունեցան ոչ միայն ույղուրների ճակատագրի, այլև ողջ չինական էթնոսի հետագա զարգացման ուղղու վրա: 19-րդ դարի վերջից Ցին դինաստիան գնալով թուլանում էր և կորցնում իր ազդեցությունը հյուսիսային և հարավ-արևելյան ճակատներում: Ի հակառակ դրան՝ մեծ թափ էին հավաքում տարբեր ժողովուրդների, այդ թվում նաև հենց չինացիների ապստամբությունները և դժգոհությունները: Ակտիվ էին նաև կրոնական հենքի վրա ձևավորված թաքուն խմբավորումները, որոնք Յետտի-Շաարի անկախության փաստի և Օսմանյան կայսրության հետ մտերմիկ հարաբերությունների արդյունք էին: Ցին դինաստիայի թուլացումից օգտվելով, բազմաթիվ թյուրքական ծագում և իսլամ դավանող ներկայացուցիչներ մշատապես առիթը բաց չէին թողնում՝ Սինձիան մարզում ամբստամբություններ կազմակերպելու համար: Յետտի-Շաարի չեզաքացումից հետո ևս պանթուրքիզմի գաղափարը չհեռացավ տարածաշրջանից: Ավելի քան հարյուր թուրք էմիսարներ և կամավորներ I համաշխարհային պատերազմի նախաշեմին ժամանում են Սինձիանի մարզ՝ նպատակ ունենալով բացել դպրոցներ և

կրթել տեղի բնակչությանը պանթուրքիզմի գաղափարախոսությամբ: Այդ դպրոցներում դասավանդվում և ուսումնասիրվում էին թյուրք ազգերի ընդհանուր պատմությունը, մշակույթը, լեզուն և իսլամական հենքի վրա պրոպագանդվում էր ազատագրական պայքար մղելու գաղափարը: Դա նաև իր հետ բերելու էր անկախ պետություն ստեղծելու անհրաժեշտությունը, որին պետք է միանային Կենտրոնական Ասիայի տարածքներն ու ժողովուրդը, Ղազաախստանը, ամբողջ Սինձիանն ու Արևելյան Մոնղոլիան:[1]

Սինձիանի ժողովուրդների ակտիվացումը չդադարեց նաև 1920-ական թվականներին՝ արդեն իսկ Չինաստանի արևելյան հակառակորդի դերակատարությամբ: Չինաստանի հետ մշտապես հակամարտող Ճապոնիան ևս ուներ իր հետաքրքրությունները տվյալ տարածաշրջանում: Դեռևս 1918 թվականին Տոկիոյում բացվել էր ույղուրական հատուկ պատրաստության ազգային դպրոց, իսկ Սինձիանում՝ “Թուրանի” համայնք: Այդ ամենը մեկ նպատակ էր հետապնդում՝ ստեղծել ճապոնական կառավարություն ունեցող մի պետություն Չինաստանի հյուսիսում:[2]

19-րդ դարի առաջին կեսը Չինաստանի պատմության անկայուն շրջափուլերից է համարվում: Ցին դինաստիայի հեռացումը, Սինհայի հեղափոխությունը, Ճապոնիայի հետ հակամարտությունը ծանր ազդեցություն է թողնում Չինաստանի թե՛ քաղաքական և թե՛ տնտեսական օրակարգի վրա: Արտաքին ուժերը՝ ի դեմս ԱՄՆ-ի, Մեծ Բրիտանիայի, Ռուսական կայսրության (ավելի ուշ՝ ԽՍՀՄ) և Ճապոնիայի, փորձում էին ապակայունացնել երկիրը և խառնվել ներքին գործերին: 1930-ական թվականներին նրանց է միանում նաև Գերմանիան՝ իր զավթողական քաղաքականությամբ: 1930-ական թվականներից սկսած՝ Չինաստանը կառավարվում էր Չանկայշիի կողմից, որը իր որդիներից մեկին ուղարկում է ֆաշիստական Գերմանիա՝ ռազմական դասընթացների: Զուգահեռ դրան ակտիվանում են Չինաստանի հարավում բնակվող ժողովուրդների և հյուսիս-արևմուտքում՝ ույղուրների, դունգանների և այլ ազգությունների անհնազանդությունները: Արտաքին ուժերի՝ մասնավորապես Թուրքիայի կողմից թե՛ քաղաքական և թե՛ ռազմական աջակցություն ստանալով՝ ձևավորվում են մի քանի ռազմական ճակատներ Սինձիան մարզի ներսում:[3] Այդ միավորումները ունեին միայն մեկ նպատակ՝ ապստամբել Չինաստանի կառավարության դեմ և վերջապես ստեղծել նոր անկախ իսլամական պետություն:[4]

---

[1] *Տե՛ս* ***Хожамбердиев К.*** *Указ. соч. - С. 337-345.*

[2] *Տե՛ս* ***Петров В.И.*** *Синьцзян: краткая история народных движений и воспоминания. - М.:, 2003. - С. 343-346.*

[3] *Տե՛ս* ***Бабаян Давид Климович*** */ ПОЛИТИКА КИТАЯ В ЦЕНТРАЛЬНОЙ АЗИИ, НА КАВКАЗЕ И В СЕВЕРНОМ ПРИКАСПИИ В* ***КОНЦЕ XX – НАЧАЛЕ XXI ВВ./ Москва 2016/ http://ivran.ru/f/Dissertaciya_Babayana_D.K..pdf***

[4] *Տե՛ս* ***Хожамбердиев*** *К. Указ. соч. - С. 341-352.*

Հակաչինական ապստամբությունները վերջիվերջո հասնում են որոշակի հաջողության: Արդեն իսկ 1932 թվականին տարածաշրջանում հայտնվում է Խոտանի էմիրատը, որն իր հետ բերում է նոր պետության ձևավորմանը: Արդեն իսկ 1933 թվականի նոյեմբերի 12-ին տարածաշրջանում հայտնվում է մի նոր սուբյեկտ՝ Արևելյան Թուրքեստանի Իսլամական Հանրապետությունը: Այն հայտնի էր նաև Ույղուրստանի Հանրապետություն անվանումով և կառավարվում էր փաստացի նախագահ Խոջա Նիյազի կողմից: Արևելյան Թուրքեստանի Հանրապետության կենտրոնն էր համարվում Քաշգարը, որը ձգտում էր ամեն կերպ միջազգային ճանաչում ստանալ միջազգային հարաբերությունների հիմնական ակտորներից: Սակայն ո՛չ Չինաստանը և ո՛չ էլ Խորհրդային միությունը չէին կարող կողմ լինել իսլամական հենքի վրա ստեղծված նոր անկախ պետությանը:

Ույղուրների ստեղծած նոր պետությունը, չունենալով բավարար փորձ, աջակցություն և հայտնվելով միջազգային հարաբերությունների միջև եղած տարաձայնությունների կիզակետում, շուտով չեզոքացվում է: Բանն այն է, որ Չինաստանում մշտապես շարունակվող քաղաքացիական պատերազմի արդյունքում երկիրը բաժանվել էր երկու բևեռների: Դրանք էին՝ չին ազգայնականները և կոմունիստները, որոնք իրենց հերթին ցանկանում էին տիրանալ ամբողջ Չինաստանին: Իրավիճակը փոխվում է միայն այն ժամանակ, երբ Արևելյան Ասիայի հյուսիսում իր ազդեցությունն է մեծացնում Չինաստանի և Սովետական Միության հարևաններից մեկը՝ Ճապոնիան: Ճապոնիան ցանկանում էր ընդլայնել իր տարածքը, ուստի և վարում էր էքսպանսիայի քաղաքականություն:

Հայտնի է, որ Սովետական Միության ներկայացուցիչները բացահայտ դեմ էին Չինաստանում հաստատված Գոմինդյաններին և աջակցելով կոմունիստներին՝ փորձում էին թուլացնել Չանկայշիի իշխանությունը Չինաստանում: Սակայն իրադրությունը փոխվում է, երբ 1937 թվականին Ճապոնիան ներխուժման փորձեր է իրականացնում դեպի Չինաստանի հյուսիս, Մոնղոլիա և ներկայիս Ռուսաստանի արևելյան շրջաններ: Սովետական Միության ռազմական ուժերի ղեկավար կազմի զեկույցներից հետո սովետական բանակը որոշում է կայացնում աջակցել Չինաստանի կառավարությանը և կայունացնել իրավիճակը տվյալ հատվածում: Այդ աշխարհաքաղաքական խնդիրների հետ հաշվի նստելով՝ նոր ստեղծված Արևելյան Թուրքեստանի Իսլամական Հանրապետությունը գրավվում է սովետական և չինական բանակների կողմից և այնուհետև փոխանցվում Չինաստանին: Սովետական բանակը, օգտագործելով իր օդային ուժերը, կրակահերթի է ենթարկում Սինձիանի տարածքը՝ Չինաստանին վերադարձնելու նպատակով: Կարևոր է նշել, որ Սինձիանի նոր ղեկավարը

ավելի հակված էր սովետական վարչակարգին, քան չինական գոմինդյանների իշխանությանը:[1]

Սինձիանի ղեկավարության մասին խոսելիս, կարելի է առանձնացնել ամենակարկառուն դերակատարներից մեկին՝ Շեն Շիցային: Շեն Շիցայը 20-րդ դարի երեսունականներից եղել է Սինձիան մարզի մարզպետը՝ ղեկավարը, որը փաստացի, սովետական իշխանության հետ վարելով բարիդրացիական հարաբերություններ, դարձել էր Սինձիանի միապետը: Տվյալ մարզը և հարակից շրջանները ակտիվ տնտեսական հարաբերություններ էին վարում ԽՍՀՄ-ի հետ և ուղղակիորեն կախման մեջ էին գտնվում առևտրականներից:[2]

Ինչպես արդեն նշել էինք, 1936-ին Չինաստանը կորցնում է բավականին մեծ թվով տարածքներ՝ հատկապես ներկայիս Չինաստանի հյուսիս-արևելյան և ծովափնյա հատվածներում: Ճապոնիան ցանկանում էր վերջնականապես հպատակեցնել Չինաստանին և ձերբազատվել Չանկայշիի իշխանությունից, և քանի որ Չինաստանի հյուսիսային սահմանը անցնում էր միայն Սինձիանի տարածքով, մինչև 1942 թվականը գոմինդյանները փորձում էին բանակցել Շեն Շիցայի հետ և համագործակցության որոշակի պայմանավորվածություններ ձեռք բերել: Այդ թեմայով Պետրովը նշում է, որ «1942 թվականին Սինձիան մարզի խոշոր քաղաքներից Ուրումչի է մեկնում անձամբ Չանկայշիի կինը՝ բանակցություններ վարելու ակնկալիքով: Այս անգամ տարածաշրջանային և անգամ միջազգային դրությունը այլ էր: 1942 թվականի հունիսի 22-ին Գերմանական Վերմախտը հարձակվել էր ԽՍՀՄ-ի վրա և բավականին արագ տեմպերով շարժվում էր առաջ: Շեն Շիցայը հասկանալով, որ այլևս չի կարող ենթադրել սովետական բանակի և իշխանության աջակցությունը՝ կտրուկ շրջադարձ է կատարում դեպի գոմինդյանական ղեկավարություն: Անմիջապես հայտվում են կուսակցական նոր մարզային շտաբեր, ներկայացուցիչներ, իսկ Շեն Շիցայը որոշում է կտրուկ քայլերով ձերբազատվել կոմունիստներից և կոմունիստական հայացքներ ունեցող բնակչությունից»:[3] Այդ քաղականությունը բերում է նրան, որ 1942 թվականին նախ՝ սկսվում է ղազախների ապստամբությունը, իսկ այնուհետև՝ մարզի տարբեր հատվածներում ձևավորվում են ուժային պայքարի խմբավորումներ: Ղազախական թևի առաջնորդն էր Դալելխան Սուգուրբայևը, որը ոգեշնչելով այլ տեղացի ժողովուրդներին, կոչ էր անում ստեղծել նոր անկախ պետություն:[4]

---

[1] *Տե՛ս* ***Алексей Волынец*** */ Первая часть. История уйгурского сепаратизма до 1950-х годов /* *https://rusplt.ru/society/education/world/uyguryi-v-bolshoy-igre-velikih-derjav-7859.html*

[2] *Տե՛ս Letter of Governor Sheng Shicai to CDES.Stalin, Molotov, and Voroshilov - https://digitalarchive. /wilsoncenter.org/document/121894*

[3] *Տե՛ս* ***Петров В. И.*** *«Мятежное „сердце“ Азии. Синьцзян: краткая история народных движений и воспоминания» - Москва, издательство «Крафт+», 2003. ISBN 5-93675-059-0*

[4] *Տե՛ս 杜根成, "达列力汗·苏古尔巴也夫" 中华英烈网 / http://www.81.cn/yljnt/2014-01/20/content_5741785.htm*

Հայրենական մեծ պատերազմի տարիներին Սինձիանի մարզը գտնվում էր ծանր տնտեսական ճգնաժամի մեջ: Շեն Շիցայի կայացրած որոշումը՝ ԽՍՀՄ-ի հետ առևտրական հարաբերությունները դադարեցնելու մասին, բերեցին նրան, որ մարզում արդյունաբերարական և գյուղատնտեսական ապրանքների պակաս կար: Դժգոհությունների մեծ ալիքը հանգեցրեց 1944 թվականի օգոստոսին Չանկայշիի՝ Շեն Շիցայի հետ կանչման որոշմանը, իսկ այդ պաշտոնը ժամանակավորապես կրճատվեց:[1] Մարզային կառավարության ղեկավար նշանակվեց Յու Ջուսինը, ով մի շարք բարեփոխումներ իրականացրեց, ընդհուպ մինչև ազատ արձակեց քաղբանտարկյալներին: [2]

Իրավիճակի սրումը ավելի ու ավելի էր խորացնում ապստամբների հետ հարաբերությունները, ուստի 1944 թվականի սեպտեմբերից ղազախների, ույղուրների և այլ ժողովուրդների զինված պայքարի արդյունքում տարածաշրջանում հայտվում է մի նոր պետություն: Հոկտեմբերից սկսվում են նաև ապստամբությունները Նիլկի շրջանում՝ թաթարների, ղազախների և կալմիկների մասնակցությամբ: 1944 թվականի նոյեմբերի 7-ին Քուլջան անցնում է ապստամբների ազդեցության տակ, իսկ հինգ օր անց՝ նոյեմբերի 12-ին, իր անկախությունն է հռչակում նոր Արևելյան Թուրքեստանի Հանրապետությունը: Հատկանշական է, որ առաջին Արևելյան Թուրքեստանի իսլամական Հանրապետությունը իր անկախությունը նույնպես հռչակել էր նոյեմբերի 12-ին(1933 թվական):

Նոր անկախ հանրապետության առաջին նախագահ է դառնում Ալիհան Տորեն՝ որը դեռ 1943 թվականին հիմնել էր «Արևելյան Թուրքեստանի ազատության կոմիտեն» և ակտիվորեն քարոզում էր անկախացման գաղափարը: Նորաստեղծ պետության կառավարությունը սահմանեց Սինձիանում բնակվող ժողովուրդների հավասարության, մշակույթի և տնտեսության հզորացման, իսլամի խորացման և հարակից պետությունների հետ բարիդրացիական հարաբերություններ վարելու քաղաքականություն: Կարևոր էր նաև տարբեր ազգային պատկանելիություն ունեցող ներկայացուցիչներից կանոնավոր բանակ ստեղծելու մտադրությունը: Բանակաշինության գործում մեծ դեր ունեցավ Ահմեդժան Քասիմը, որը ապստամբական միավորումներից 1945 թվականի ապրիլի 8-ին ձևավորեց կանոնավոր բանակ :

Արևելյան Թուրքեստանը ցանկանում էր տիրանալ և իր հսկողությունը սահմանել Չինաստանի հյուսիս-արևմտյան հատվածում, որտեղ իրենց հետաքրքրություններն ունեին նաև ԽՍՀՄ-ն և Չինաստանի կոմունիստական հայացքներ ունեցող ուժերը: Նրան հաջողվում է տիրանալ Ալթայի շրջանին, Քուլջային և 1945 թվականի օգոստոսի վերջին

---

[1] ***John W. Garver***. *Chinese-Soviet Relations, 1937-1945: The Diplomacy of Chinese Nationalism. 173-176pp.*

[2] ***Jacobs, Justin Matthew*** *(2011). Empire besieged: the preservation of Chinese rule in Xinjiang, 1884-1971. San Diego, CA: University of California, San Diego. ISBN 9781124814070.*

գոմինդյանական ուժերից ազատվում է նաև Ուրումչին։ [1] Պաշտոնական Չոնգցինգը, տեղեկանալով իրավիճակին մասին, ընդունում է հեղափոխական ուժերի՝ ինքնավարություն ստանալու իրավունքը։ Նա կոչ է անում դադարեցնել ռազմական գործողությունները և նստել բանակցությունների սեղան՝ Սինձիանում նոր կոալիցիոն կառավարություն ձևավորելու նպատակով։ Արևելյան Թուրքեստանի Հանրապետության (ԱԹՀ) ղեկավարությունը համաձայնում է բանակցել՝ ելնելով գոմինդյանների մարտական ուժերի առավելության հանգամանքից։

1945 թվականի հոկտեմբերին Ուրումչի է ժամանում ԱԹՀ-ի Կառավարությունը։ Գեներալիսիմուս Չանկայշին, հաշվի առնելով Սինձիանում առկա բարդ իրադրությունը, բանակցությունների է ուղարկում գեներալ Ջան Ջիջոնգի գլխավորած պատվիրակությունը, որի նպատակն էր մինիմալիզացնել Սինձիանում անջատողական տրամադրությունները և ստանալ կարևոր լծակներ հետագայում ձևավորվելիք նոր կառավարությունում։ Հատկանշական է, որ Չանկայշիի կառավարությունը ռազմական գործողությունները դադարեցնելու հարցով բանակցում էր նաև ԽՍՀՄ-ի հետ, որը ակտիվորեն զինում էր Արևելյան Թուրքեստանի Հանրապետությանը։ Այդ տարիներին Թուրքեստանի բանակի ենթակայության տակ առկա էին ծանր հրետանի, ժամանակակից զրահատեխնիկա, իսկ գումարտակները ուղեկցվում էին Խորհրդային Միության ռազմական խորհրդատուներով։ Դա էր պատճառը, որ ապստամբները արագորեն կարողանում էին դիմակայել գոմինդյաններին և առաջ շարժվել դեպի հարավ։ [2]

Փաստացիորեն տվյալ տարածաշրջանում ձևավորվել էին «երեք տարածքներ», որոնք ունեին անկախանալու նկրտումներ և ցանկանում էին ստանալ ինքնավարություն՝ գոմինդյանական իշխանությունից։ Ի վերջո երեք ամիս տևած բանակցություններից հետո, 1946 թվականի հունիսի 12-ին՝ Ուրումչիում, ստորագրվում է խաղաղության համաձայնագիրը, ըստ որի՝ ապստամբած տարածքներում ձևավորվում է կոալիցիոն կառավարություն, որը գլխավորում է անձամբ Ջան Ջիջոնգը։ Ըստ համաձայնագրի, Ահմեդժան Քասիմովը դառնում է կառավարության երկրորդ դեմքը, իսկ ընդհանուր անդամների համամասնությունը պետք է բաշխվեր հետևյալ կերպ՝ տասնհինգ ներկայացուցիչ տեղական և տասը՝ գոմինդյանական իշխանություններից։ Հաստատվեցին նաև մի շարք փոփոխություններ, որոնցից կարելի է առանձնացնել լեզուների հավասարությունը, խոսքի, հավաքների, մամուլի ազատությունները, ինչպես նաև զանազան կազմակերպությունների հետ համագործակցելու հնարավորությունը։ Արևելյան Թուրքեստանի հանրապետությունը

[1] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 20-25pp.*
[2] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 16-18pp.*

այսուհետ կարող էր ինքնուրույն վարել ներքին և արտաքին առևտրային հարաբերությունները, որը պայմանավորված էր ԱԹՀ կանոնավոր բանակի պահպանմամբ: [1]

Բանակցային կողմերը թեև եկան համաձայնության, սակայն նրանց նպատակները իրականում այլ էին: Չինացի ազգայնականները ձգտում էին իրենց իշխանությունը ամրապնդել Սինձիանում, իսկ Արևելյան Թուրքեստանի Հանրապետությունը՝ ձերբազատվել արտաքին իշխանություններից և հիմնել նոր անկախ պետություն: Ընդ որում, ԱԹՀ-ի ներսում տիրող իրավիճակը ևս անկայուն էր, քանի որ տարբեր շրջանների առաջնորդները ձգտում էին տիրանալ ողջ ԱԹՀ-ին և դառնալ այդ տարածքների ղեկավարը: Բացի այդ, հարկավոր է նշել ԽՍՀՄ և չինացի կոմունիստների հետաքրքրությունները, որոնք հետագայում հանգեցրին միջազգային փոփոխության: Բանն այն է, որ 1946 թվականին գոմինդյանների հետ ձեռք բերված պայմանավորվածություններից հետո ԱԹՀ-ի առաջին նախագահ Ալիհան Տորեն հափշտակվում է ԽՍՀՄ հատուկ ծառայությունների կողմից և ուղարկվում Տաշկենտ, որտեղ և անցկացնում է իր հետագա տարիները: Նրան փոխարինելու է գալիս Ահմեդժան Քասիմովը, որը, ի տարբերություն Ալիհանի ուներ պրոսովետական հայացքներ: Հենց Քասիմովն էր գլխավորում պրոսովետական Արևելյան Թուրքեստանի թյուրքական ժողովուրդների ազգային կոմիտեն, որը մշտապես համագործակցում էր և ուղղորդվում ԽՍՀՄ-ի կողմից: Մյուս կողմից Չինաստանում ընթանում էր մշտական բնույթ կրող քաղաքացիական պատերազմը, որը ևս մեծ դեր խաղաց Սինձիանի հետագա ճակատագրի վրա:

Ջան Ջիջոնգը, վարելով գոմինդյանական ազգային քաղաքականություն, փորձում էր թուլացնել սովետական ազդեցությունը ոչ միայն ԱԹՀ-ի, այլև ամբողջ տարածաշրջանի վրա: Հայտնի է, որ ԱԹՀ-ի մաս կազմող ոչ բոլոր տարածքներում էր ընդունվում կոմունիստական գաղափարախոսությունը և ԽՍՀՄ-ի աջակցությունը: Մասնավորապես Ալթայի շրջանում գոմինդյանների հետ կոալիցիոն կառավարություն ստեղծելուց հետո ղեկավար էր նշանակվել ղազախ Օսպան-Բաթուրը, որը մշտապես հակամարտության մեջ լինելով Ահմեդժանի իշխանության հետ՝ փորձում էր ձերբազատվել ԽՍՀՄ-ի «լծից»: Գոմինդյանների ներկայացուցիչ Ջան Ջիջոնգը դիվանագիտորեն փորձում էր աջակցել Օսպան-Բաթուրին՝ տրամադրելով նրան զենք, զինամթերք: Ջիջոնգը նպատակ ուներ համոզել Օսպան-Բաթուրին փոխել իր դաշնակիցներին և անցնել գոմինդյանների կողմը: Միաժամանակ Ջիջոնգը բարեփոխում էր տնտեսական և քաղաքական համակարգը, սակայն 1947 թվականից Սինձիանի ողջ

[1] *Տե՛ս* ***Andrew D.W. Forbes****, Warlords and Muslims in Chinese Central Asia: A Political history of Republican Sinkiang 1911-1949 (Cambridge: Cambridge University Press, 1986) ISBN-13: 978-0521255141, 97-99pp*

տարածքում սկսվում են մասսայական ապստամբություններ: 1947 թվականից անկարգություններ են սկսվում նաև Ուրումչիում: Ապստամության հիմնական ակտորները ույղուրներն էին, որոնք պահանջում էին ույղուրներին՝ մարզային իշխանությունում ավելի մեծ լծակներ տրամադրել: Դժգոհությունները հանգեցրին իշխանությունից Ջան Ջիջոնգի հեռացմանը, ում հետագայում փոխարինեց Մասուդ Սաբրին:[1]

Արևելյան Թուրքեստանի Հանրապետության ներքին քաղաքական ճգնաժամը չչեզոքացվեց անգամ Մասուդ Սաբրիի օրոք: Բանն այն է, որ Մասուդ Սաբրին ուներ հակասովետական և պրոգոմինդյանական կողմնորոշում, որը խիստ հակասում էր «երեք տարածքների» քաղաքականության հետ: Իրավիճակը էլ ավելի սրվեց, երբ Օսպան Բաթուրը լքեց կոալիցիոն կառավարությունը և ԱԹՀ մայրաքաղաք Քուլջան: Նրան միացան այլ առաջնորդներ, որոնք համաձայնեցին պայքարել իրենց իսկ անկախության համար՝ մասնավորապես ԽՍՀՄ-ի և պրոսովետական ուժերի դեմ: Այսպիսով՝ կարելի է պնդել, որ 1947 թվականի վերջից Քուլջայի և Ուրումչիի միջև կապը կտրվեց, որը նոր թափ հաղորդեց Սինձիանում ռազմական գործողություններին: Խոսքը Մոնղոլիայի և Չինաստանի միջև գտնվող «Բեյթաշան» տարածքի շուրջ տեղի ունեցած միջադեպի մասին է: Չինացի ազգայնականները 1947 թվականի առաջին կեսին ներխուժում են Մոնղոլիայի տարածք և գրավում որոշ բարձրունքներ: Մոնղոլիայի հարավային և Չինաստանի հյուսիսային հատվածները մշտապես եղել են ԽՍՀՄ-ի ուշադրության տակ, ուստի հաշվի առնելով նաև հակասովետական Մասուդ Սաբրիի նշանակումը՝ ԽՍՀՄ-ն որոշում է աջակցել մոնղոլներին և Սինձիանում բնակվող այլ ուժերի՝ տարածաշրջանում վերահսկողություն սահմանելու նպատակով: Առաջնային փուլում գոմինդյանական ուժերը հաջողություններ են արձանագրում, սակայն հունիսի 5-ի՝ ԽՍՀՄ օդային ուժերի ռմբակոծություններից հետո չինացիները սկսում են նահանջել: Մոնղոլները և խորհրդային բանակը հատում են Սինձիանի սահմանը և հասնում մինչև կենտրոնական Սինձիան: Ղազախների առաջնորդ Օսպան Բաթուրի, գոմինդյանական ուժերի և ամերիկյան աջակցության շնորհիվ ռազմական գործողությունները դադարեցվում են և վերականգնվում է ստատուս-քվոն: [2]

Միջիշխանական պայքարը և ռազմական բազմապիսի գործողությունները շարունակվեցին ընդհուպ մինչև 1948-1949 թվականները: ԽՍՀՄ-ի ներկայացուցիչները քաջ գիտակցում էին իրենց դերը տարածաշրջանում և պարբերաբար վարում էին բանակցություններ

---

[1] *Foreign Relations of the United States, 1947, The Far East: China, Volume VII / United States Government Printing Office Washington 1972 / https://history.state.gov/historicaldocuments/frus1947v07*

[2] ***David D. Wang**. Clouds over Tianshan: essays on social disturbance in Xinjiang in the 1940s. - NIAS Press, 1999. - P. 122. - ISBN 8787062623.*

թե՛ ԱԹՀ-ի և թե՛ գոմինդյանական ուժերի հետ: Պատճառը ակնհայտ էր՝ Չինաստանում քաղաքացիական պատերազմի վերջին փուլն էր ընթանում և անհրաժեշտ էր դիվանագիտական ճիշտ որոշում կայացնել: 1949 թվականի՝ գոմինդյանների և կոմունիստների միջև տեղի ունեցած հունվարյան բանակցություններից արդեն իսկ պարզ էր, որ գոմինդյանական ուժերը պարտություն են կրել, և նրանց Սինձիանի ճակատագիրը այլևս չէր հետաքրքրում: ԽՍՀՄ առաջնորդ Իոսիֆ Ստալինը իր հերթին համակրում և բանակցում էր Մաո Ցզե Դունի հետ, որը Չինաստանի Կոմունիստական կուսակցության հիմնական ակտորն էր: Հատկանշական է, որ Ստալինը նաև ակտիվ բանակցում էր Նանկինում գոմինդյանական իշխանության հետ՝ ի դեմս՝ Ջան Ջիջոնգի և Ուրումչիի քաղաքապետ՝ Բուրհան Շահիդիի: Չնայած գոմինդյանների և կոմունիստների միջև 1949 թվականի հունվարից-մայիս տևած բանակցությունները ոչ մի արդյունք չտվեցին, այնուամենայնիվ Բուրհան Շահիդիին փոխարինեց Մասուդ Սաբրիին՝ որպես մարզային կառավարության ղեկավար: [1]

Բուրհան Շահիդին, ինչպես արդեն նշել էինք, ուներ գոմինդյանական ուղղվածություն, սակայն երբ 1949 թվականի սեպտեմբերի 24-ին Կոմունիստական կուսակցության բանակը ներխուժում է Սինձիանի տարածք՝ նրան այլ տարբերակ չի մնում, քան անցնել Չինաստանի կոմունիստական կուսակցության կողմը և փոխել իր դիրքորոշումը: Նույն ուղին է ընտրում նաև Ջան Ջիջոնգը, որը 1949 թվականի հունիսին լքելով Գոմինդյանական կուսակցությունը, իր աջակցությունն է հայտնում անձամբ Մաո Ցզե Դունին:

Չինաստանում քաղաքացիական պատերազմը մոտենում էր իր ավարտին, և տեղի էր ունենում ուժերի վերադասավորում: Սինձիանը բացառություն չէր, և գոմինդյանական ուժերի հեռացման փաստը չին կոմունիստներին թույլ էր տալիս ավելի ազատ գործել տվյալ տարածքում: 1949 թվականի օգոստոսի 9-ին Կոմունիստական կուսակցության առաջնորդ Մաո Ցզե Դունը հանձնարարում է Ջան Ջիջոնգին հրավիրել Սինձիան մարզում ապստամբած ժողովորդների առաջնորդներին՝ Չինաստանի ժողովրդական քաղաքական խորհրդատվական խորհրդին մասնակցելու նպատակով: Մաո Ցզե Դունը ցանկանում էր վերջնական բանակցել «երեք տարածքների» առաջնորդների հետ՝ առաջարկելով միանալ և հռչակել Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն: Սինձիանի տասնմեկ հոգանոց պատվիրակությունը, որի կազմում էին Ահմեդժան Քասիմովը, Աբդուլքերիմ Աբբասը, Իշաք Բեկ Մունոնովը, Լու Չժին և Դելիլիան Սուգուրբաևը, ուղևորվում են դեպի Պեկին:[2]

---

[1] *Տե՛ս* ***Mark Dickens****: "The Soviets in Xinjiang 1911-1949. 25-26pp.*

[2] *Տե՛ս* ***Donald H. McMillen****, Chinese Communist Power and Policy in Xinjiang, 1949-1977 / Westview Press, 1979, 24p.*

Պատվիրակությունը պետք է հասներ Պեկին ԽՍՀՄ ինքնաթիռով՝ Խորհրդային Ղազախստանի մայրաքաղաք Աստանայից կատարելով մի քանի կանգառներ: Տվյալ ուղին պայմանավորված էր նրանով, որ պատվիրակության ղեկավար Ահմեդժան Քասիմովը ցանկանում էր հանդիպումներ ունենալ ԽՍՀՄ ներկայացուցիչների հետ և համոզել նրանց աջակցել Սինձիանի անկախ պետության ստեղծման գաղափարը: Ահմեդժանը կտրուկ դեմ էր արտահայտվում Չինաստանին միանալու և Չինաստանի հյուս-արևմտյան մարզը դառնալուն, ուստի ակնկալում էր ԽՍՀՄ աջակցությունը: Բանակցությունները ընհատվում են, քանի որ 1949 թվականի սեպտեմբերի 3-ին ԽՍՀՄ-ը տեղեկացնում է ԱԹՀ-ի առաջնորդներից Սայֆուդդին Ազիզին՝ պատվիրակության ինքնաթիռի կործանման մասին: Պատվիրակության բոլոր անդամները մահանում են, իսկ հետագա բանակցային գործընթացը շարունակվում է հենց Սայֆուդդին Ազիզի գլխավորությամբ: Ի տարբերության նախորդ պատվիրակության՝ Սայդուդդին Ազիզին լոյալ էր տրամադրված Չինաստանի նոր կոմունիստական կուսակցության առաջնորդներին և գաղափարին, ուստի նա համաձայնում է միանալ նոր ստեղծվելիք Չինաստանի Ժողովրդական Հանրապետությանը:

Կան տարբեր վարկածներ պատվիրակության ինքնաթիռի կործանման վերաբերյալ: Ըստ պաշտոնական վարկածի՝ ինքնաթիռը եղանակային պայմաններից ելնելով, կտրուկ նվազեցրել է թռիչքի բարձրությունը և բախվել Բայկալ լճի մոտակայքում գտնվող սարի: Ոչ պաշտոնական վարկածի կողմնակիցները, որոնց թվում հիմնականում ույղուրներ են, պնդում են, որ եղել է պայմանավորվածություն ԽՍՀՄ և Չինաստանի առաջնորդների միջև, չեզոքացնել Ահմեդժան Քասիմովին և Սինձիանի այլ առաջնորդներին՝ բանակցությունները չձախողելու նպատակով: Ինչպես արդեն նշել էին, Քասիմովը դեմ էր Չինաստնանի կազմի մեջ մտնելու գաղափարին և բանակցություններին փորձելու էր ստանալ Չինաստանի համաձայնությունը՝ նոր անկախ պետություն ստեղծելու համար:

1949 թվականի սեպտեմբերի 19-ին Սինձիանի ղեկավար Բուրհան Շահիդին հեռագիր է ուղարկում Մաո Ցզե Դունին, ըստ որի՝ Սինձիանի ժողովորդը դադարեցնում է Գոմինդյանների հետ բոլոր հարաբերությունները և միանում Չինաստանի Կոմունիստական կուսակցությանը: 1949 թվականի հոկտեմբերի 1-ին Պեկինում հռչակվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունը, իսկ Սինձիանը դառնում է ՉԺՀ մարզերից մեկը: Հոկտեմբերի 20-ին Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակը տեղակայվում է Ուրումչիում, իսկ Բուրհան Շահիդին վերանշանակվում է որպես Սինձիանի ղեկավար: Հաջորդ տարի՝ 1950 թվականին, ԱԹՀ-ի ռազմական ուժերը ևս միանում են Չինաստանի ժողովրդական ազատագրական բանակին և ենթարկվում պաշտոնական Պեկինին:

Չինաստանի նոր կոմունիստական կառավարությունը հռչակելով Սինձիանը իր տարածքի մաս՝ ժառանգեց նաև բոլոր քաղաքական, ազգային և տնտեսական խնդիրները, որոնք առկա էին տվյալ տարածքում: Ապստամբությունները Սինձիանում շարունակվեցին ընհուպ մինչև 1960-ական թվականները: Մինչև 1955 թվականը, Մաո Ցզե Դունին հաջողվում է բանակի շնորհիվ կասեցնել և չեզոքացնել անկայունություն ստեղծող բազմաթիվ ուժերը: Ի վերջո, 1955 թվականի հոկտեմբերի 1-ին ձևավորվում է Չինաստանի Ժողովրդական Հանրապետության տարածքով ամենամեծ՝ Սին-Ծիանգ Ույղուրական ինքնավար շրջանը:[1]

Այսպիսով՝ ույղուրները, պատմության ողջ ընթացքում բախվելով բազմաթիվ տարածաշրջանային, քաղաքական և տնտեսական խնդիրների, կարողացել են պահպանել իրենց էթնիկ ինքնատիպը, մշակույթն ու լեզուն: Պատմական տարբեր փուլերում մշտապես ձգտել են ունենալ անկախ պետություն, պետականություն, հիմք են հանդիսացել բազմաթիվ պետական միավորումների ձևավորմանը, իսկ Չինաստանի հետ հարաբերություններում վարել են պետականամետ քաղաքականություն: Հատկանշական է, որ ՉԺՀ առաջնորդ Մաո Ցզե Դունը շատ էր կարևորում Սինձիանի հետ համաձայնության գալու հանգամանքը, քանի որ հյուսիսային, հյուսիս-արևմտյան և արևմտյան սահմանները մինչև օրս համարվում են Չինաստանի տնտեսական և ռազմաքաղաքական կարևոր նշանակության տարածքներ:

Գրականություն

1. Gumilev, L. N. Ancient Turks. The history of the formation and flourishing of the Great Turkic Kaganate
2. (the VI-VIII centuries AD). SPb: Kristall. 2003.
3. Dillon, M. Xinjiang – China's Muslim Far Northwest. – L., 2004.
4. Muldavin Joshua / «From Rural Transformation to Global Integration: The Environmental and Social Impacts of
5. China's Rise to Superpower»: 2006
6. Liu, Tao Tao. Faure, David (1996). Unity and Diversity: Local Cultures and Identities in China. Hong Kong
7. University Press Rian Thum (13 October 2014). The Sacred Routes of Uyghur History.
8. Harvard University Press. pp. 113
9. Syroezhkin, K. L. Separatism in Xinjiang: Myths and Reality. Centralnaya Asia, no.10, pp. 34-36, 1997.

[1] *Տե՛ս* ***Preeti Bhattacharji*** *- Uighurs and China's Xinjiang Region /* https://www.cfr.org/backgrounder/uighurs-and-chinas-xinjiang-region

10. Xinjiang Tunji Nanjian - 2009. Statistical Yearbook of Xinjiang in 2009. Urumqi. 2009. P. 79. (In Chn.)
11. Yitzhak Shichor, Ethno-Diplomacy: The Uyghur hitch in Sino-Turkish relations,
12. East-West Center, Honolulu,2009
13. Zhogolev, D. A. The policy of the Chinese Communist Party in the regions of the national autonomy (the 80s).
14. Cand. sci. diss. M., 1991.
15. Zhong hua ren min gong he guo min zu qu yu zi zhi fa (Law on National District Autonomy of the People's
16. Republic of China). Governmental Portals of the People's Republic of China National People's Congress.
17. Beijing: 2005, p. 10. (In Chn.)
18. Бабаян, Д.К. Политика Китая в Центральной Азии, на Кавказе и в Северном Прикаспии в конце XX – начале
19. XXI вв.: дис. канд. ист. наук / Д.К.Бабаян. – М., 2016. – 521 с
20. Байчоров А.М Китаизация. Последствия роста мощи Китая для мира в XXI веке. - Москва:
21. «Международные отношения", 2013.
22. Буяров, Д.В. Современный Китай в системе международных отношений / Д.В. Буяров. Москва: 2015. – 632с Владимиров, О. Страницы политической биографии Мао Цзэ-дуна / О. Владимиров, В. Рязанцев. - М.:
23. Издательство политической литературы, 2001. - 112 с.
24. Григорьев В.В. Землеведение К. Риттера. География стран Азии, находящихся в непосредственных
сношениях с Россией. Восточный или Китайский Туркестан. СПб. 1869.
25. Даниэль, Елисеев История Китая. Корни настоящего / Елисеев Даниэль. - М.: Евразия, 2008. - 255 с
26. Китай в мировой политике. - М.: Российская политическая энциклопедия, Московский государственный
институт международных отношений (Университет) МИД РФ, 2001. - 528 с.
27. Киреев А.А Современный Китай в системе международных отношений. - Москва: 2014. Китай после
28. "культурной революции". - М.: Мысль, 1979. - 360 с Лексютина Я.В., Петрунина Ж.П., Киреев А.А.
29. Современный Китай. Страницы истории, Москва:

Ленанд, 2016.
30. Лифань Ли, Шиу Дин. Геополитические интересы России, США и Китая в Центральной Азии / Ли
31. Лифань, Дин Шиу // Центральная Азия и Кавказ. – 2004. – № 3. – 212 с.
32. Малявкин, 1972. Малявкт А. Г. Китай и уйгуры в 840-848 гг. // Сибирь, Центральная и Восточная Азия в
33. средние века. - Новосибирск, 1972.
34. Разов, С. С. Китайская Народная Республика. Справочник: моногр. / С.С. Разов. - М.:
35. Издательство политической литературы, 1989. - 277 с.
36. Сыроежкин К. Л. Этносоциальный фактор развития Синьцзяна // Проблемы Дальнего Востока. 1990. № 2.

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ,պ.գ.դ., Վ.Մ.Ավանեսյանը: